



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱԿԱՆ ՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Է. ԳրիգորՅԱՆ

» 12 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 108

Ձեռնարկողը՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ

Ք. Երևան, Չարեկցի 1

Գործունեությունը՝

Կապան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված  
տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-1) շրջակա  
միջավայրի վրա ազդեցության ռազմավարական  
գնահատման հաշվետվություն

Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿի  
տնօրենի Ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 108

<<19>> 12 2018թ.

**Սյունիքի մարզի Կապան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-1) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրույթային փաստաթուղթ.

- շրջակա միջավայրի վրա ազդեցության

ռազմավարական գնահատման

(ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Սյունիքի մարզի Կապան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Սյունիք-1) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, Քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/1-4): Սյունիք-1 հատվածը ներառում է տարաբնակեցման համակարգի հետևյալ կետային տարրերի՝ բնակավայրերի (մեկ քաղաք և 37 գյուղ) համալիրը. ք. Կապան, Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջածոր, Արծվանիկ, Բարգուշատ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Դիցմայրի, Եղեգ, Եղվարդ, Խդրանց, Խործոր, Ծավ, Կաղնուտ, Ձորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շիշկերտ, Շրվենանց, Չափնի, Սզնակ, Սյունիք, Սրաշեն, Սևաքար, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ռիժանիս, Օխտար բնակավայրերը:

Հիմնադրույթային փաստաթղթում արտացոլվել են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, մասնավորապես.

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային խնդիրների բացահայտումը,





• համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,

• քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Հիմնադրույթը ներկայացնում է փաստաթղթերի մշակման նպատակային ծրագիր, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին՝ մասնավորապես տարածական զարգացման հիմնական գործիքակազմի միջոցով կանխորոշելով և կանոնակարգելով տարածքների և տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները, ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանման ու բարելավման, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների կատարելագործման, պատմամշակութային ժառանգության պահպանման, տարածքի ինժեներական նախապատրաստման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, ինչպես նաև բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների համալիրը:

Նախագծում համակողմանի վերլուծվել և ընդհանրացվել են համայնքների ընդհանուր բնութագրերը.

• տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգը՝ երկարաժամկետ հեռանկարում,

• բնակավայրերի գործող և կանխատեսվող տնտեսական (գյուղատնտեսական, զբոսաշրջային, արդյունաբերական, մշակութային, գիպսատար) մասնագիտացումները,

• տարածաշրջանային նշանակության ենթակառուցվածքների և օբյեկտների տեղաբաշխման ուրվագիծը,

• սոցիալական օբյեկտների առկա և կանխատեսելի տեղաբաշխման ուրվագծերը,

• ինժեներական նախապատրաստման, տարածքների և բնակչության պաշտպանության բարձրացմանն ուղղված ծրագրերը,

• տարածաշրջանի զարգացման ներդրումային ծրագրերը:

Ըստ գծային տարրերի վերլուծության պարզաբանվել է, որ Սյունիքի մարզով են անցնում Մ-2 Երևան-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետություն միջպետական ճանապարհը, որին Գորիս քաղաքին մոտ միանում է Հայաստանի Հանրապետությունը Արցախին կապող հիմնական ճանապարհը: Մ-2 ավտոճանապարհով են իրականացվում Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծվող և արտահանվող բեռնափոխադրումները:

Ի հայտ են բերվել հատակագծային կառուցվածքների թերի կողմերը, ըստ բնապահպանական խնդիրների, կանաչ հանրային տարածքների սակավության և փոխադարձ կապերի բացակայության: Հիմնական բնութագրերում նշվել են միկրոռեգիոնին հարող հատվածները՝ հարավից այն սահմանակից է Մեղրու, արևմուտքից՝ Քաջարանի, հյուսիսից՝ Գորիսի տարածաշրջաններին, իսկ արևելքից սահմանակից է Արցախին:

Սյունիքի մարզում՝ ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին 0.9°C-ից (Մեղրի) - 9.8°C է (Գորայք), հուլիս-օգոստոսին՝ 13.9-



25.4°C: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 161մմ (Մեղրի) մինչև 826մմ (Սիսիանի լեռնանցք):

Մարզը հարուստ է պատմամշակութային ժառանգությամբ: Բնական հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը, Շաքիի ջրվեժը (18.0մ)՝ Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը, Որոտանի և Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սուսիների ռելիկտային պուրակը, Շիկահողի արգելոցը, Մթնածորի անտառը: Սյունիք-1 միկրոռեզիդի տարածքում ներառված անտառտնտեսության անտառային տարածքներն ըստ անտառպետությունների հետևյալն են. Առաջածորի տնտեսություն՝ ընդհանուր՝ 6883.0հա, որից անտառածածկ է 6022,8հա, Կապանի տնտեսություն՝ համապատասխանաբար 6015.0հա 5298,8հա, Դավիթ Բեկի՝ 10571.0հա, 9536,2հա, Սյունիքի՝ 4465.0հա, 4229,5հա, Նորաշենիկի՝ 2672.0հա, 2635,5հա, Ճակատենի՝ 7647.0հա, 7359,2հա:

Ներկա դրությամբ Կապան քաղաքային և նշված գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 7.0հա (10մ<sup>2</sup>/մարդ):

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը ներկա դրությամբ կազմում է՝ ք. Կապան - 968.688հա, 37 գյուղ - 942.615հա: Հեռանկարում սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը նախատեսվում է հասցնել 1911.303հա-ի:

Գյուղական համայնքների վարչական սահմաններում եղած գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման հետ կապված, հողօգտագործողները մասամբ փոխել են կոլտնտեսային-սովխոզային պտղատու այգիների ֆունկցիոնալ նշանակությունը (հատուկ նշանակության կանաչ տարածքներ): Բնակչության սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր:

Տարաբնակեցման տարածքային միավորների վերլուծության շրջանակում դիտարկվել են բնակավայրերով զբաղեցված և անտրոպոգեն ազդեցության ենթարկված տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերը, բնապահպանական տարածքները (անտառներ, ջրային մակերեսներ):

Անտրոպոգեն ազդեցության ենթարկված տարածքները միկրոռեզիդի տարածքում զբաղեցնում են զգալի մակերեսներ՝ պայմանավորված հանքարդյունաբերության հետ: Առանձնացված են գեոմորֆոլոգիական հետևյալ տեղամասերը.

- Կապանի հանքային դաշտը,
- Խալաջ գետի հովիտը,
- Ողջի գետի աջափնյա մասը,

Կապան համայնքի մակերեսը կազմում է 76446.54հա: Դա կազմում է Սյունիքի մարզի մակերեսի մոտ 17%-ը:

Առանձին բնակավայրերի վերլուծությամբ ի հայտ են բերվել համընդհանուր խնդիրների համալիր, որոնք առկա են գրեթե բոլոր բնակավայրերում: Հաղորդակցության ուղիների մասով՝ ներքին փողոցային ցանցի կարծր ծածկույթի նորոգման աշխատանքների անհրաժեշտությունը, գիշերային լուսավորության համակարգի անցկացումը: Ենթակառուցվածքների մասով՝ ջրամատակարարման, ոռոգման համակարգերի նորոգումն, ընդլայնումը, կոյուղու համակարգի իրականացումն, աղբահանության կազմակերպումը: Քաղաքային տնտեսության մասով՝ շենքերի ընթացիկ նորոգումները, տանիքների վերանորոգումը, հանրային տարածքների կազմակերպումը:





Նախագծում հաշվի են առնվել նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված գերակայությունները: Ըստ տնտեսության առկա վիճակի վերլուծության տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են՝ հանքարդյունաբերությունը, այգեգործությունն, առևտուրը, խաղողագործությունն, անտառատնտեսությունը, մեղվաբուծությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը:

Կապան քաղաքի տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է՝ գերակշռող գունավոր և ազնիվ մետաղների հանքարդյունաբերությամբ: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունն (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ինչպես հանքավայրերը, այնպես էլ դրանց շահագործման արդյունքում ձևավորված թափոնադաշտերը և լցակայանառաջացման տնտեսությունները զգալի վնաս են հասցնում բնական լանդշաֆտներին:

Մարզի 6 քաղաքային և 8 գյուղական բնակավայրերում, որոնցում բնակվում են մարզի 72% բնակչությունը: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: Մարզում կոշտ թափոնների վերամշակման գործարաններ չկան: Սյունիքի մարզում գործում է 6 աղբավայր, որոնք կառավարվում են համայնքների կողմից, իսկ աղբահեռացումը իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Բնակավայրերում տարիների ընթացքում ստեղծվել են կամ տարերայնորեն ձևավորվել են բազմաթիվ աղբավայրեր և աղբանոցներ, որոնք զբաղեցնում են զգալի տարածքներ և առաջացնում են լուրջ բնապահպանական և սանիտարական խնդիրներ:

Թեև Ասիական բանկի կողմից կատարված նախանախագծային հետազոտական աշխատանքների արդյունքում, որպես սանիտարական աղբավայրի տարածք առաջադրվել է Չափնի գյուղի տարածքում 20.0հա հողակտոր, այնուհանդերձ սույն նախագծի շրջանակում լրացուցիչ հարցումների, բնակչության կարծիքների հետազոտության արդյունքում առաջադրվեց Սյունիք բնակավայրի վարչական տարածքում գործող աղբավայրի՝ սանիտարական աղբավայրի վերակազմավորման տարբերակը: Ներկայացված են ընտրված տարածքը սանիտարական աղբավայր կառուցելու և շահագործելու հիմնավորումները:

ԵՄ կողմից ֆինանսավորվող «Բնապահպանական մարտահրավերները՝ առավելություն» ծրագիրը պայմաններ և ենթակառուցվածքներ է ստեղծում պլաստիկ թափոններից ստացված պոլիմերաավազային խառնուրդից շինանյութի՝ մայթերի եզրաքարերի, սալիկների, կղմինդրի և այլ արտադրության համար: Թափոնները հավաքվելու են Վայոց Ձոր և Սյունիք մարզերում:

«Սյունիք-1» համայնքներում տեղակայված է 44 գերեզմանոց, ընդհանուր 82.0հա տարածքում (այդ թվում Կապան քաղաքային համայնքում՝ 7 գերեզմանատուն, ընդհանուր 21.61հա տարածքով): Գերեզմանոցները գործող են, դրանց սանիտարա-պաշտպանիչ գոտիներն որոշ տեղերում պահպանված չեն: Ճանապարհների զգալի մասը գրունտային են կամ քանդված, անբարեկարգ են և կանաչապատված չեն: Հեռանկարում նախատեսված է գերեզմանոցների պարսպապատում՝ ՍՊԳ-ի չափերով, հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու նպատակով: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով, տարածքի բարեկարգում և կանաչապատում, իսկ գերեզմանոցի պարագծով նաև երկշարք ծառապատում:

Հիմնվելով ձևավորված հատակագծային կառուցվածքի կետային տարրերի միջև կազմավորված ինժեներատրանսպորտային ցանցի, գծային տարրերի համակարգի վրա, վեր



են հանվել թույլ օղակները և առաջադրվել դրանց հնարավոր բարելավմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումները:

Ներհամայնքային կապերի համակարգը կրում է գլխավորապես անկանոն բնույթ պայմանավորված մասամբ առանց մասնագիտական մշակումների տարերայնորեն ձևավորված պատմական բնակավայրերի հատակագածյին կառուցվածքով, մասամբ էլ տեղական լանդշաֆտային պայմաններով:

Կապան քաղաքի, ինչպես նաև Կապանի տարածաշրջանի Աճանան, Առաջաձոր (մասամբ), Սյունիք, Սզնակ (միացման փուլում է) և Նորաշենիկ (կենտրոնը) բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է ««Վեոլիա Ջուր»» ՓԲԸ ««Կապան»» տեղամասի կողմից: Կապան համայնքի մնացած բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է տեղական կառավարմամբ:

Մարզում խմելու ջրի մատակարարման հետ կապված խնդիրները հատկապես գերակա են սահմանամերձ և մեծաթիվ բնակչություն ունեցող համայնքների համար:

Կապան համայնքի ջրամատակարարման ներկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ սպառողներին հասնող ջրաքանակի անբավարարությունը հիմնականում պայմանավորված է ջրի մեծաքանակ հոսակորուստներով՝ ջրմուղի ցանցի մաշվածության հետևանքով: Որոշ համայնքներում պահանջվող ջրաքանակ չի ապահովվում ջրամատակարարման գոտիների և անհրաժեշտ ծավալով ՕԿՋ-ների բացակայության պատճառով: Չի պահպանվում խմելու ջրի համար պահանջվող անհրաժեշտ որակը՝ վարակազերծման կայանների և սանպահպանության գոտիների բացակայության պատճառով: Քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է 4 հիմնական ջրաղբյուրներից, որտեղից ջուրը մուտք է գործում «Գեղի» և «Չանախչի» ջրի մաքրման կայան, այնտեղից էլ բաշխիչ ցանց: Գյուղական բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է մակերևութային ջրաղբյուրներից: Ջրամատակարարման համակարգերի գլխամասային կառույցները և օրվա կարգավորիչ ջրամբարները (ՕԿՋ) հիմնականում չունեն սանիտարական պահպանության գոտիներ: Գյուղական բնակավայրերի զգալի մասում բացակայում են օրվա կարգավորիչ ջրամբարները, և խմելու ջուրն անմիջապես տրվում է բաշխիչ ցանց՝ առանց վնասազերծման: Ջրամատակարարման ներքին բաշխիչ ցանցերի զգալի մասը գտնվում է անհուսալի վիճակում: Դրանք ֆիզիկապես մաշված են, քայքայված, ինչի հետևանքով հոսակորուստները զգալի տոկոս են կազմում:

Հեռանկարում՝ ելնելով ռելիեֆային պայմաններից ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի խմելու ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար կիրառելով ճնշման կարգավորիչներ կամ նախատեսելով նոր ՕԿՋ-ներ:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը վտանգավոր է շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար: Մարզի ջրային ռեսուրսների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական պատճառը տարեցտարի ավելացող կենցաղային կեղտաջրերն են:

Կապան քաղաքի կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանը Արցախյան պատերազմի ժամանակ ամբողջովին շարքից դուրս է եկել, իսկ կոյուղատարն էլ՝ քայքայվել է: Արդյունքում կոյուղու ջրերը ստիպված բաց են թողնվում քաղաքի ընդհանուր երկայնքով հոսող Ողջի գետի մեջ: Ըստ էության՝ գետը վերածվել է Կապանի կոյուղու կեղտաջրերի հոսքի ստեղծելով հակասանիտարական վիճակ և գարշահոտություն:





Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում՝ հեռանկարում, նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով, որոնք ամենացածր նիշերում կմիանան կոյուղու գլխավոր կոլեկտորին, որն էլ հեռացման ենթակա հոսքաջրերը կտեղափոխի նախատեսվող մաքրման կայան: Նախատեսվում է ժամանակակից տեխնոլոգիաներով նոր, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման կայանի իրականացում Սյունիք բնակավայրում (նախկին մաքրման կայանի տարածքում), որը կծառայի Կապան քաղաքի և Սյունիք գյուղի բնակավայրի կոյուղու հոսքաջրերի մաքրման համար:

Գյուղական բնակավայրերում առաջարկվում է տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորումներ՝ ըստ համապատասխան հաշվարկային հզորությունների:

Կապանի տարածաշրջանով անցնող գետերի ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու, ոռոգելի 1726.0հա հողատարածքներն ընդարձակելու և դրանց ջրապահովվածությունը բարձրացնելու նպատակով՝ ելնելով գետերի ջրապահովվածությունից, դրանց զբաղվածության աստիճանից, ինչպես նաև ռելիեֆային պայմաններից, հեռանկարում նախատեսվում է նոր ջրամբարների և ոռոգման համակարգերի կառուցում (Ծավի, Նորաշենիկի, Քաշունիի ջրամբար, Դավիթ-Բեկ ոռոգման համակարգ): Առաջարկվել է կաթիլային համակարգի ներդրում, որի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո:

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Սյունիքում գազաֆիկացումը կազմում է 35%: Ընդ որում այն իրականացվել է մարզի համեմատաբար խոշոր բնակավայրերում՝ Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան քաղաքներում: Կապան համայնքի գյուղական բնակավայրերից գազաֆիկացված են միայն Սյունիք, Սզնակ և Աճանան գյուղերը, որոնց սնուցումն իրականացվում է Կապանի գազաբաշխիչ կայանից:

Դիտարկվել է նաև այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը: Հաշվի առնելով սույն նախագծով ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները (արևափայլի տարեկան տևողությունը հասնում է շուրջ 2120 ժամի), որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է դիտարկել արևի էներգիան, ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման բնագավառում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման փաստաթղթերի հիերարխիական կառուցվածքի երեք մակարդակը (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) միավորող



փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը, հետապնդելով մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ, անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենսամիջավայր:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված հիմնադրույթային փաստաթուղթը, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների կարծիքը, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողություններն ու առաջարկությունները, Կապանի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Սյունիքի մարզի Կապան քաղաքի և հարակից գյուղական բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել է առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք նպաստելու են տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, լուծվելու են տարածքի հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

### Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
2. Հիմնադրույթային փաստաթղթի գործունեության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-1) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Գլխ. մասնագետ



Ա. Դնոյան

Կ. Մովսիսյան